

**Կենսաբանություն-2016, I ՓՈԻԼ
տևողությունը 60 րոպե
10-րդ դասարան**

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Յուրաքանչյուր թեստում առաջարկվում է 4 պատասխան: Ընտրեք միայն մեկը, որը, ըստ Ձեզ, առավել ճիշտ է և ամբողջական:

1. Տերևում ջրի մոլեկուլի վերընթաց ուղին հետևյալն է.

1. Հերձանցք – մեզոֆիլ - քսիլեմա
2. Քսիլեմա – մեզոֆիլ - հերձանցք
3. Ֆլոեմա – քսիլեմա - մեզոֆիլ
4. Ֆլոեմա – մեզոֆիլ – հերձանցք

2. Հալոբակտերիաները օգտագործում են լույսի էներգիան.

1. Քլորոֆիլ **a** –ի օգնությամբ
2. Քլորոֆիլ **b** –ի օգնությամբ
3. Քլորոֆիլ **a** –ի և **b** –ի օգնությամբ
4. Բակտերիոռոդոպսինի օգնությամբ

3. Բույսերը պատասխանում են լույսի (սպեկտրային բաղադրության) ազդեցությանը՝ ակտիվացնելով

1. ցիտոքրոմը
2. ռոդոպսինը
3. ֆիտոքրոմը
4. ցիտոկինինը

4. Ձկներին, որոնք մշտապես ապրում են գետերում, անվանում են

1. կիսաանցողիկ ձկներ
2. անցողիկ ձկներ
3. նստակյաց ձկներ
4. քաղցրահամ ջրերի ձկներ

5. Ցամաքային կենսաձև կարող է ունենալ.

1. սպիրոգիբան
2. պլեվրոկոկը
3. քլորելլան
4. ուլտրախլոր

6. Հեռացված վահանագեղձով գորտի շերտիկը.

1. կշարունակի նորմալ մետամորֆոզը
2. կշարունակի մետամորֆոզը, բայց կմնա պոչով ընդմիջտ
3. կդադարեցնի մետամորֆոզը և կսասկի
4. կդադարեցնի մետամորֆոզը, բայց կշարունակի ապրել ջրում՝ դառնալով հսկա թրթուռ

7. Թիրախ բջջի կորիզային ռեցեպտորների (ընկալիչների), այլ ոչ թե թաղանթների հետ փոխազդող հորմոն է հանդիսանում.

1. ադրենալինը
2. ինսուլինը
3. աճի հորմոնը
4. տրիպտոֆանինը

8. Խիտինը պոլիմեր է, որը բաղկացած է.

1. գլյուկոզի մնացորդներից
2. N-ացետիլգլյուկոզամինի մնացորդներից
3. գլալկոզի մնացորդներից
4. ամինաթթվային մնացորդներից

9. Կալիումի ցիանիդը արգելակում է.

1. ՆԱԴԻ դեհիդրոգենազին
2. ԱԵՖ սինթետազին
3. ցիտոքրոմօքսիդազին
4. ՌՆԹ պոլիմերազին

10. Տվյալ վայրում ստեղծված և էվոլյուցիայի ենթարկված տեսակը կամ ցանկացած այլ կարգաբանական կատեգորիան կոչվում է.

1. էնդեմիկ
2. ավտոխտոն
3. ռելիկտ
4. արորիզեն

11. Շնչառության հաճախակիանալը ֆիզիկական բեռնվածությունների ժամանակ պայմանավորված է.

1. O₂ բարձր կոնցենտրացիայով արյան մեջ
2. O₂ ցածր կոնցենտրացիայով արյան մեջ
3. CO₂ բարձր կոնցենտրացիայով արյան մեջ
4. CO₂ ցածր կոնցենտրացիայով արյան մեջ

12. Էմբրիոնալ զարգացման ո՞ր փուլն է, որ բնորոշ է միայն քորդավորներին.

1. բլաստուլա
2. գաստրուլա
3. մորուլա
4. նեյրուլա

13. Ուղտի ընկերքը.

1. դիֆուզ է
2. բլթակավոր է
3. զոնալ է
4. դիսկոիդալ է

14. Հակամարմինները սինթեզվում են

1. միայն մակրոֆագերում
2. միայն լիմֆոցիտներում
3. մակրոֆագերում և լիմֆոցիտներում
4. մակրոֆագերում և պոլինուկլեար նեյտրալ լեյկոցիտներում

15. Տղայի արյան խումբը 0-է, նրա մոր արյան խումբը A-է, իսկ հոր արյան խումբը B-է: Հավանականությունը, որ տղայի քույրը կունենա նույն արյան խումբը,

1. 1/16 է
2. 1/8 է
3. 1/4 է
4. 1/2 է

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Օրգանիզմում ճեղքման է ենթարկվել 12 մոլ գլյուկոզ, որից 7 մոլը թթվածնային փուլով: Քանի՞ մոլ ԱԵՖ է կուտակվել թթվածնային փուլում:

17. Քանի՞ շղթայակցման խումբ կա կոկոռշենու բջիջներում, եթե այդ բույսի սոմատիկ բջիջների դիպլոիդ հավաքակազմը 16-է:

18. Քանի՞ տեսակի փոշեհատիկ է առաջանում փոշեանոթում, եթե սոմատիկ բջիջը պարունակում էր 4 գույգ քրոմոսոմ:

19. Քանի՞ օձ քրոմոսոմ կլինի մարդու՝ կամայականորեն վերցրած երկրորդ կարգի 100 սպերմատոցիտներում:

20. Շունն ունի 78 քրոմոսոմ; Քանի՞ քրոմոսոմ են պարունակում նրա առաջին կարգի օոցիտները: